


ՊԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Ֆր.
Տարեկան	6 "
Վեցամսեայ	15 "
Վեցամսեայ	8 "

Սակրիկայի համար	3 շր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	

Դասնորոգման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. հ. երեսին առաջին սանթիմետրը համար 20 0/0 զեղչ կը լայն:

Վաճառքի համար ձևով 10 սանթիմ.



Երևանի քաղաքում տպագրված է Շարժումը

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Варна (Bulgarie)

Արևմտահայկազի համար

( 20 ՍԱՆԹԻՄ )

Պուշկարիոյ համար

կեսի 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք և չին տպուկ

ՄԱՍԻՆՆԵՐԻ ԱՊՐԱՆՈՒՄԻ ԳՐՈՒՄԸ

ԿԸ ՀՐ ՏՐԱՎՈՒԹԻ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄՈՐԸ

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԲԱՏԵՆԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵՐԸ

ՄԵՐ ԱՐԱՆՈՒՄԻ ԱՍՍՈՒԼԸ

Բոլոր պատմաբանները գիտեցին ժողովուրդների ազատ պայքարը, ինչպես և առողջ, կապուցուրիչ և ստրուկներին ընդվզող մի համար պատրաստող մի գաղտնիք: Յուսահատ, լքված, վախկոտ ստրուկը այդ գրականության մէջ է փնտռել և գտել քաջութեան, անկեղծութեան, շիտակութեան և ընդվզումի ոգեւորիչ օրինակները:

Մենք էլ ունենք ազատ մասուր, յեղափոխական գրականութիւն, որը ստեղծվել է բռնութեան սահմաններից դուրս ազատ երկիրներում, ու քարոզում է ազատ և անկախ կերպով: Բայց նա քարոզում է ուրիշ բան. մեծ մասամբ նրա սուղատ սրտանկներին մէջ տեղադրվում են ամենազտոտ նիւթեր, որոնք ոչ միայն հայ ամբոխի մտքին ու սրտին առողջ և կապուցուրիչ սնունդ չեն տալիս, այլ ընդհակառակը աւելի տկարացնում, աւելի փշաջնում են անխորտիր լաւ ու վատը իրարից դատել չը կարողացող ընթերցողին:

Ահագին քանակութեամբ թերթեր են հրատարակվում արտասահմանի բոլոր անկիւններում, գրանց երեք չորրորդը հայ յեղափոխութեան պաշտպանի տիտղոսը գեռ իրենց ծնած օրից են ստանձնել, իբր թէ իրարից տարբերվում են միայն ընդհանուր պատմաբանութիւնը յառաջանելու միջոցներով, բայց լաւ հետեւեցէք և տեսէք որ այդ փալաւների մէջ յեղափոխութիւնը, պատմաբանութիւնը համակրիչի գործնող ոչինչ չկայ: Ընդհակառակը շատ մեծ նշաններ յեղափոխութիւնը վարկաբեկելու, ցեխոտելու համար:

Ինչ է պատճառը, պատճառը շատ որոշ է. ապա: երկրներում հրատարակվող թերթերի մեծ մասի զեկաւարներն են մեծ մասամբ տղէտ, բարոյականութեան հետ ոչ մի յարաբերութիւն չունենող

շարժաւաններ, որոնք իրենց անբարոյականութեան պատճառով անյաջողութիւնների մասնը ընկնելով կհանքի զանազան սուպարէզներում և օգտվելով հայ ամբոխի տգիտութիւնից, առաջնական բարոյական սկզբունքներին, իսկոյն ձեռնարկում են թերթի հրատարակութեան մասուր և բարոյական ուղեցոյցի գերը ստանձնելով, զբաղվում են ցնդաբանութիւններով, որոնց մէջ ամեն ինչ կայ, բացի խելքից, առողջ մտքից և բարոյականութիւնից:

Մի մամանակ անշնորհ արհեստաւորը, խարբայ ու կեղծարար վաճառականը, անյաջող վարձագետը անբոխի էին գառնում ապրելու համար. հիմա այդ տեսակ տիպերը հրապարակախօս են դառնում, մանաւանդ արտասահմանում և խօսում են բարոյականութեան, խելքի, զբոսայտի, շիտակութեան, ազնւութեան և այլ այդ տեսակ մեծ, այդ հոտած պարոնների անմատչելի, բարձր ու մտքուր նիւթերի մասին:

Մի ուրիշ յօդուածով մենք կը պարզենք թէ այդ «դէպուսէ և դէկլաւսէ»ները ինչպէս են տեղաւորվում հայ մամուլի մէջ:

ՎԱՐՄՈ

ԺՐԵՍԻ ԶՈՐԸ

(Կրճատում)

Շար. նախորդ թիւին և վերջ  
Ինչպէս բացատրուեք է ամերիկեան օրագրողներուն որոնք անոր բացատրութիւնները տարածեցին արեւմտեան եւրոպայի մէջ, Ան ըսեր է թէ Գիշինկիին դէպքերուն մէջ բան մը չը կար, կամ գրեթէ բան մը չը կար: Մինչդեռ չի կրնար ուրանալ որ նոյնիսկ հրէա պատգամաւորներուն հանդէպ որոնք իր քով գանգատելու էին գացեր, հրէա տարբեր ներկայացուցած է իբրեւ յեղափոխութեան խմոր Զի կրնար ուրանալ և աշխարհագրութեան դասագիրքերը, մանաւանդ Լէպետէվինը, որոնց մէջ տղայոց կը սորվցուի հրէաները ատել, Բայց ան

ըսեր է որ այդ սպանողանցի, բռնարարութեան անմիջական պատրաստութիւններուն մասին տեղեկութիւն չէ ունեցեր. և ես ատոր կը հաւատամ: Կը կարծեմ որ Գիշինկիին պատճենները այնքան թոյնոգ էին զկախի աշխարհը, որ կը թողարկէին նախարարին այդ դէպքերը կատարուելէ վելջը իմանար:

(Մափահարութիւններ)

Բայց աչքի զարնողը ան է որ Ռուս նախարարն զինքը չըբազատող պայմաններուն մէջ, անկարող է ինքզինքը մեզի հաւատալի դարձնել: Ինչո՞ւ. որովհետեւ պատճենագէտ միայն ինքն է որ կը խօսի, բայց կաւել անկախ օրագրողները: Ինք կը խօսի, բայց բաժին չունի Ռուս կեղծողական կեանքին մէջ ուր դէպքերուն վիճակը կրնան իրենց վկայութիւնները բերել: Եւ Ռուս կատարութիւնը օր մը ինչպէս կը փափագինք, մտակ պագային, պարտաւորուած պիտի ըլլայ կոչ ընել Ռուս պագին օրպէս զի ան զինքը երաշխուար ամբողջ զայնակղած աշխարհին աւջեւ:

(Մափահարութիւններ)

Մենք յուսաւու հիմեր ունինք, քաղաքացիներ, որ մարդկութեան սպասած յեղաշրջումը պիտի կատարուի շնորհի. անտեսական, բարոյական և քաղաքական պատճառներու, ձեւով մը որ ես չեմ կրնար որոշել, և ինքը Ռուս ժողովուրդը ազատելով պիտի վերահաստատուի և Ֆինլանդացիներին յափշտակուած ազատութիւնը:

Ես չեմ ուզեր ատոր վրայ ծանրանալ. դուք գիտէք այդ ազնիւ և վէտ պատմութիւնը. գուցէ ճիշդ ըլլայ որ Ֆինլանդացի աշխուշ չը վերաբերէ իր այն աւանդական բացառիկ ազատութիւնը զոր կը վաւելի Ռուս կայսերութեան տակ. կարելի է որ Ֆինլանդացի յարիզմի բռնութեանց հեղեղին ենթարկուելով զայն միջոց զարցնէ իր կեանքի նոր ձեւերուն մէջ, Ֆինլանդացի հին ազատութիւնը հեղեղելու ամբողջ Ռուսիայի մէջ: (Մափահարութիւններ) Եւ այս պիտի ըլլայ իրական յարութիւն մը, ոչ մանաւոր կծկումով մը, որը պատմութեան ոգիին մէջ գոյութիւն չունի, այլ վեհու թեւան և ազատութեան ծաւալումով մը:

Այն ինչ որ ըսի Ֆինլանդացիներու համար, իրաւունք ունիմ ըսելու նաեւ Ալզաս Լօրէնին համար, եւ Ֆրանսացիս, բարձրաձայն, ու կըսեմ, պատերազմներու ոգիին չէ որ մենք պիտի սպասենք վաղեմի ազատութիւնը Ալզաս-Լօրէնի համար, այլ հրաշալի

յեղաշրջումէն որ միանգամայն տեղի պիտի ունենայ թէ Ֆրանսայի և թէ Գերմանիոյ մէջ. Ֆրանսայի որ օրէ որ աւելի ազատ կը դառնայ: (Մափահարութիւններ) Կը բարեմտեղ թեմ որ լոր սղեկը մտիկանս իրարու արդարութեան պահանջներով և ազատութեան համբաւչիտութեամբ:

ՃՇՄԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ Պ. ՊԼԵՎԷՆ

Թուրքիի սնցած սեղիւնը աւերակն ու սուղն հ իրենց  
Վ. Հիւլօ

(Թու. գ. «L'horoykknig»)


(Շար. նախորդ թիւին)

Հեղինակը երկար եւ բարակ խօսելով երկրորդ դրամայի, Գիշինկի կոտորածի մասին եւ այստեսմանում հրատարակուող ռուս թերթերից այդ կոտորածը նկարագրող կըտորներ բերելուց յետոյ շարունակում է այսպէս.

«Հրէաները, ինչպէս եւ ամբողջ ժողովուրդը գիտէին որ կոտորածը կազմակերպել էր կառավարութիւնը, ուստի սչ ըի արդարութիւն չէին սպասում. Իրենք չէին գանգատում անգամ. մինչդեռ մարդասպանները եւ թաւանողները ազատ համարձակ շրջում էին փողոցներում, և Շչէրբան կոչուած երեք վիրաւորված քրիստոնեաների ուղեկցելով ազատուելու էր, «պիտէ ք ըրոյր նիւսնիլն մոտրիչ» Միայն Օրէսայից եկող գատախաղի շնորհիւ սկսեցին մի քիչ գործերը կարգի գալ. բայց հենց որ նա հնոպաւ, գոյրը կրկին կարգին մտաւ, ձերբակալվածները կրկին ազատ արձակվեցին եւ մարդասպանները կարողացան խաղաղութեամբ Գիշինկի թողել: Այբանացիների հրոսախուժքը որ բերված էր գործերը կատարելու թաւանով միասին Ռուսմանիա զրկվեցին:

Բայց մենք չը պէտք է թողենք որ Պիշկի սուտերը յարձանակեն, մենք այդ սուտերը, պէտք է պարզաբանենք եւ կը տեսնենք թէ ով տակը կը մնայ, ճշմարտութիւնը թէ Պիշկէն:

Նեղոյ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Եւրոպայի զիւանագիտական աշխարհը վերջին ամիսը զրազուած էր Լուսիտանիայի Անգլիա այցելու խնդրով...

Այսօր ամէնքն ալ միաբնիւ կան որ Անգլիոյ թագաւորին Ֆրանսա այցելելու և Լուսիտանիոյ փոխ այցելութիւն տալու անպատճառ իրենց բարերար ազգացութիւնը պիտի ունենան երկու երկրներուն յարաբերութեանց վերայ:

Իտալիոյ թագաւորն ալ Ֆրանսա պիտի երթար, որուն այցելութեանը իսկոյն պիտի պատասխանէր Լուսիտանաց յաւիտենական դարձած պապին հիւանդութիւնը այդ այցելութիւնները քիչ մը յետաձգեց:

Իտալիոյ երիտասարդ թագաւորը որ իր հօրը ճամբով չի երթար կարծես և շատ ակամօջ չի կոխարարութեան անկան արամադրութեանը, նոյնպէս կուզէ բարեկամական կապեր հաստատել ցեղակից Ֆրանսայի հետ. ըստ երեւոյթին միայն ակամայից ստիպուած է յետաձգել իր այցելութիւնը որովհետեւ չի ուզեր նոր պապին ընտրութիւնը, որ սեղի պիտի ունենայ ամէն տարի և ամէն ամիս բայց միշտ ապրող պապին մահէն յետոյ, իր բացակայութեանը ասան կատարուի:

Թէեւ պապը զեռ մեռած չէ. բայց այս անգամ կարծես հետատուտակ պիտի մեռնի. ուստի վստիզանին չորքը արդէն սկսուած են էնտրիքները, Գերմանական, Ռուս Ֆրանսական զիսպանները կուզեն սղղիցութիւն բանեցնել որ իրենց ուզած մարդը պապ ընտրուի: Անշուշտ երբ թագաւորը բացակայ ըլլայ զուցէ այդ էնտրիքները աւելի վնասակար գոյն ստանան Իտալիոյ համար:

Բայց Ֆրանսան ալ չի ուզեր այդ տեսակ պարագաներու մէջ զբաղած ըլլալ. ասոր համար ան ալ խնդրած է թագաւորին այցելութիւնը յետաձգելու համար:

Անգիւլաները Եւրոպական թերթերը հաղորդեցին որ Ռուս պատերազմական նախարարը յաջողոր է ձարունացիները Ռուսիոյ բարեկամ դարձնել և այլևս այդ երկու խոշոր դրացիներուն մէջ պատերազմ ծագելու վախը չը կայ:

Սակայն քանի մը օր վերջը նոր լուրեր սկսան պատիլ ոչ միայն պատերազմի վախը վերացած է, այլ ընդհակառակը ձարունիա եւսնգով պատերազմի կը պատրաստուի, թէեւ

Ռուս պատերազմական նախարար ճիզեր Բախով և համոզել որ Անգլիա ձարունը պիտի լքէ եթէ վերջինս Ռուսիոյ հետ պատերազմի բռնուի:

Ռուսիոյ ներքին գործերը կը շարունակեն խռովակ վիճակի մէջ մընալ. կամաց կամաց Եւրոպացիք կուզեն խռովուիլ և ներքին գործերուն եթէ ոչ ուղղակի, գոնէ անուղղակի կերպով: Ամերիկեան կառավարութիւնը թէեւ շատ քաղաքավարութեամբ, բայց ինչպէս կերեւի հաստատակէս որոշած է Նախքիներուն բողոքը հրէաներու կոտորածին առթիւ Ռուս կառավարութեան զգացնել տալ, Ռուս պաշտպանական մասնաւոր շարժեր կը թափէ Ամերիկացիներուն և բողոքող Եւրոպացիներուն զլիւնը. բայց բողոքողները կարեւորութիւն չեն տար և առ այժմ կընեն ինչ որ կրնան ընել:

Թուրքիան զեռ տագնապի մէջ է Մակեդոնական խնդրի առթիւ. թէև տագնապը արդէն յաւիտենական դարձած է անոր համար, այնուամենայնիւ նորէն շատ կը նեղուի:

Բացորոշ է որ Սուլթանն ալ պատերազմէ կը վախնայ. անցեալները Սուլթանը պատերազմի կողմնակից մէկ բարձր պաշտօնեայի մը յայտարարած է. համոզեցէք զիս որ Պուլկարիան յաղթուած պարագային պիտի կարենանք վայելել մեր յաղթութեան պատգանբը, ան ասան ես իսկոյն պատերազմ կը հրատարակեմ: Ի հարկէ պատերազմատէր պաշտօնեան զրական բան մը չէ կրցեր ըսել փատիշահին:

Թուրքիոյ պատերազմական արամադրութիւնները հետզհետէ կը թուլանան և առ այժմ Սուլթանը կրկին ընթացիկներու ծրագրին ու իրագործման միջոցներուն վրայ է որ կը խորհի և կը գործէ:

ԿնՏ

ՊՍ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՍՐԺՈՒՄՈՒ

Ռուսչոյ 27 Յունիս

Մարդասպաններու տեղիւս օսկանը իր երկրորդ թիւով Գաշնակցութեան զէմ բարբառնչած էր, բայց ես պիտի գրեմ միայն այն վատ ու վախկոտ ստույթեան զէմ որ մարդասպանները իրենց նոր օսկանին այդ թիւով մէջ տեղ նետած էին: Ներկայացնելով Ձիթճիւնի սպանութիւնը իւր անհատական գործ:

Ճշմարտութեան ու արդարութեան ահաւոր ձայնին հետզհետէ մտնելով Նշմայելով վատ վախկոտութեամբ մը այդ սուտը գրող և այդ վախկոտ ու բացումը ընող ստիպուած ասպետները չի մտածեցին սակայն որ այդ հրէշային ու անկարելի մարդասպանութիւնները ընելէ ու անոնց վրայ գիւլալին քրքիչներ արձակելէ վերջ անոր հրապարակու ու պաշտօնապէս ուրացումը պէտք է, իրենց համար խորունկ փոս մը ուր բարոյապէս ու յաւիտենապէս պիտի ծածկուին մէկ մըն ալ յարութիւն չառնելու պայմանով:

Այս պարտնները, ինչպէս ամէն տեղ, հոս ալ շատ մը մարդերու

երեսին դեռ մինչեւ երէկ կը պուսային թէ՛ սպիտի սպանները, Ձիթճիւնն ալ, պիտի սպաններ և կեռ ո՛վ կայ Հինչակեան կուսակցութեան զէմ շարողները, անոնց ամէնն ալ սպիտի սպանները, պիտի մայրէր, ու այսօր ելեր կը ստեն Ձիթճիւնի սպանութիւնն ալ անհատական գործ է, կրնա՞ք ուրանալ, որ շարաթմնեք ի վեր վառահ անհամարութեամբ մը Ձիթճիւնի սպանութեան լուրին կը սպասէիք, ու կը պուսայիք որ սպանութեան լուրը առնուածին պէս ուրախութեան սեղաններ պիտի սարքէք: Ինչպէս որ սարքէցիք ալ, կըրնա՞ք ուրանալ զուր Գ. մարդասպաններ ձեր սա խօսքերը որ շատերու ըսած էք: Ռուսիան և Կովկասը մերն է, հոն մեզի զէմ բորբականք ընողը մահով պիտի պատժենք: կրնա՞ք ուրանալ որ երբ վերախաղմբալի մէկ անդամը առեւտրական գործով մը Օտեաա և Պաթմա երթալու ստիպուած ըլլալով երբ ձեր ընկերներուն մէկուն իր վախը ու կասկածը կը յայտնէ դուք ատի իմանալով լուր կը խրկէք թէ ո՞րք մահուան վճիռ հազած չէ. հետեւաբար կրնայ երթալ, բայց պէտք է որ հոն միայն իր առեւտրական գործին վրայ խօսի և ուրիշ բանի չի խառնուի:

Արդ, ըսէք մեզի այս իրողութիւնները միթէ անհրաքելիօրէն չեն հաստատեր որ դուք մարդասպանական ընդարձակ ծրագիր մը ունիք և նահէնն ու Ձիթճիւնը այդ ծրագրին համեմատ տրուած զաղտնի հրահանգներով սպաննուած են:

Բայց ժողովուրդը ձեզ անպատիժ չի պիտի ձգէ. ան իր հզոր և ազդու ձայնով արդարութիւնը պիտի կանչէ ու զձեզ պիտի պատժէ մտհերուն ամենէն սոսկալիովը. «բարոյական մահով»:

ՊՍ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՍՐԺՈՒՄՈՒ

Հաճեցէք անկիւն մը շնորհել ձեր պատ. թերթին մէջ հետեւեալ երկտողին.

«Բարեկէն-Սիւնի» Հայկական ընթերցարանի վարչութիւնը իր շեքմ շնորհակալութիւնը կը յայտնէ Տ. Տ. Հ. Միսաք Տէմիրճեան և Կրիզոր Թահթարեան ազգայիններուն, որոնց առաջինը բարեհաճած է անցեալ կիրակի իր ամուսնութեան ու թիւ 10 Ֆո. նուրբի ընթերցարանին և երկրորդը 50 քառք-քօսթալներ ազգային գործիչներու պատկերով: 1903 Յուն 3 վարչութիւն Երեւան վառու Սիւնի ընթերցարանի

ԱԶԳ. ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ Վ Ա Ր Ի Չ Ն Ե Ր Ի Ն

Ամեն մի ազգային հիմնարկութիւն վճարում է իր պաշտօնեաներին, փոստի, վառելիքի, թղթի, մեխանի, գրիչի, սանդի թիւի և այլն ծախքերը հոգումնայն հիմնարկութեան սնտուկից. բայց հէնց որ խնդիրը եկաւ ազգային թերթին. այդ տեղ արդէն բաւականանում է միայն ազգոց տարազը շնորհելով թերթին, խմբագրութիւններին և ամեն բան ուզում ձրի անել, լինի դա յայտարարութիւն, լինի հանգանակութեան հաշուեցուցակ, որոնք դուր տեղ են բըռնում թերթի մէջ և ընթերցողներին ձանձրութիւն պատճառում: Օրինակի համար տէրտէր, ժամկոչ, տիրացու ամենքն էլ իրենց վարձը ստանում են թաղականութիւններից. ուսուցիչը, վարժուհին, ծառան ամենքն էլ իրենց աշխատութեան վարձը ստանում են հոգաբարձութիւններից. բայց հէնց որ այդ հիմնարկութիւնները թերթի հետ են գործ ունենում, այդ տեղ վճարի պէտք չէ զգացվում: Թերթը ազգային է ելել, զպրօցների և եկեղեցիների հաշիւները, յայտարարութիւնները շատ անգամ երկարաձիգ, անշնորհ կերպով դրված ու խմբագրված պէտք է ձրի հրատարակվին. կարծես խմբագրութիւնները գրաշարներին դրամ չեն վճարում. մարկան, թուղթը գրամով չեն գնում. տրպարանի համար դրամ չեն վճարում:

Անշուշտ բոլոր ազգային հիմնարկութիւնների վարչիչներն էլ գիտեն որ թերթերը ծախքերով են լոյս սեսնում և կանխիկ ծախքերով. բայց ձրիակերութիւնը այնքան պարզացած էնըրանց մէջ, որ իշի աշխատութիւնը և ծախսած գրամը այնքան անկատելի է նրանց համար որ չեն ուզում մըրճնել թէ աշխարհիս մէջ ամեն մի աշխատութիւն իր արժէքը ունի, որովհետեւ այդ աշխատութեան համար ծախսեալ, նիւթ և դրամ է վառու վում:

Մեր այդ տեսակ հիմնարկութիւնները զեկավարները զլիստորաբար լինում են վաճառականներ, գրամի, աշխատութեան և ժամանակի յարկը գիտցող մարդիկ, որոնք մի սանտիմ վուր չեն անցկացնի ոչ ոքի համար. բայց ամենամասնիկ կերպով կաշխատեն. հարստահարել հայոց թերթերին և նրանց խմբագրութիւններին:

Կարծում ենք որ ժամանակ է վերջ տալու այս անբեւ շահագործութեանը:

ՄԱՐՏԻՍ ԳՕՐԿԻՑ  
(Արևիկի Մարտիկի Պէշիկով)

Մ. Գորկու կեանքի դէպքերի մէջ  
այնքան բան կայ, որ կարող է շան-  
թել մեր երեւակայութիւնը. կարող  
է մի վեպ եւ նոյն իսկ մի հէքիաթ է.  
այս հինգ կեանքի իր ստեղծաւ,  
մեր ձանձարալի անգոյն իրականու-  
թեան սագեցրած սիրուն ու խելացի  
հէքիաթն է. այն կեանքի, որ անս-  
պասելի կերպով երեւան է հանել զը-  
րա մէջ իր իրականութիւնը, իր մէջ  
ծածկված ու ծերի գաղանի ու անա-  
զին պայտը:  
Մարտի Գորկի ծննդն է 1869 թ.  
մարտի 14-ին Նիժնի-Նովոգորոճում.  
հարուստ ներկարար կաշիւրի աղ-  
ջիկ վարվաւայից եւ մէջնահին ու  
արհեստով պատասխանործ Մարտի  
Պէշիկովից: Հայրն ու մայրը իրանց  
պսակը իրանք էին զուրա բերել,  
որովհետեւ հարուստ պատը մտքով  
էլ չէր անցկացնում մարդու սակ իր  
աղջիկը մէկ անյայտ երիտասարդի,  
որ նոր էր հասարակութեան մէջ  
խտանելի մի կտոր հայ ճարելու ճա-  
նապարհը գտել: Հայրը մեռաւ 1872  
ին. երբ Գորկի ընդամէնը երեք  
սարեկան էր ու հնդկաստի հիւանդ  
պահած: Մայրը նորից մարդու գը-  
նաց եւ շուտով մեռաւ թոքախտից:  
Սկզբից այնուհետեւ Գորկու համար  
մանկական մեծուտը տարիքը, որից  
յետոյ էլ թափառական կեանքը:  
Սկզբում նա ընկաւ իր դասն պա-  
պի ձեռքը եւ, երբ մեծացաւ, սկսեց  
ուսումնարան վազել: Բայց, ծագկով  
հիւանդանարով, թողեց ուսումը էլ  
նորից չսկսելու պայմանով: Հագի,  
թէ լրացաւ նրա ինն տարին՝ իսկոյն  
նրան խանութի աշակերտ ստիին մի  
կողակաճառի մօտ, բայց այնտեղ  
նա այրուածքներ ստացաւ ետացրած  
ջրից. եւ խանութի պանը նրան յետ  
ուղարկեց իր սուէնը: Երբ առողջա-  
ցաւ նա աշակերտ մտաւ մի գծադրու-  
ղի մօտ սակայն այդ տեղից էլ փա-

խաւ, չը կարողանալով տանել նրա  
վարմունքը, եւ մի շողիւնաւում խո-  
հարարի օգնական դառաւ. նրա  
բախտից իռնարար Մմուլի ոչ միայն  
գրագէտ էր, այլ եւ ընթերցասէր  
մէկը, նա, լինելով բարեխիտ մարդ,  
այդ տղայի արաւորութեան սակ  
դրեց իր գրագրարներ, որտեղ չար-  
ված էին պատահմամբ ձեռք բերված  
գրքեր, որոնց մէջ նեկրասովի կող-  
քին գրված էր էքզոստիկոսիզմը,  
նոյն տեղից գտնվում էր եւ Սօվրե-  
մէնիկի հատորը, իսկուրի խառնի-  
խուրը համարները ու սին վէպեր:  
Մտաայելով շողիւնաւում, Գորկի  
լաւ ճանաչեց Վօլգան, ու ի կեանքը  
նրա երկերի պիտաւոր ներշնչողն է  
եղել, իսկ Մմուլու գրքոյկները չը-  
նորհիւ կարգաւում սէր ընկաւ նրա  
սիրտը: 15 տարեկան հասակում նա  
մի զիտասովի ցանկութիւն» ունեցաւ  
սովորելու, եւ սրա համար գնաց Ղա-  
զան: Բայց նա օղիտու թիւն գնելու  
փող չուէր. եւ բանը այնպէս ե-  
լաւ, որ փոխանակ գիտութեան սա-  
ճարը մանկու, ախրը երեք բու-  
լով ու գիշեր-ցիւրկ 18-20 ժամ աշ-  
խատելու պայմանով մտաւ մի հաց-  
թուխի գործարան: Գորկի կեանքի  
այս ամենամար ժամանակի յիշողու-  
թիւնները կարգապէս կը գտնի Գոր-  
կու «Կոնօվալով», «Ման ու վեց եւ  
մէկ», «Նախկին մարդիկ» խորագ-  
րով պատմաւածքների մէջ: Այնպէս  
պատահեց որ նա հինգ այստեղ Ղա-  
զանում, պատահական գործի էլ կը-  
պաւ—բեռն էր կրում ու փայտ սղո-  
ցում: Նա ապրում էր «նախկին  
մարդկանց» թափառաչիկներին ու  
մուրապիկներին միջեւ, որոնք ի հար-  
կէ, նրան շատ բանի պէտք եկան,  
երես երեսի կանգնեցնելով շնորհալի  
պատանու անիծված հարցերի հետ:  
Չէ որ այս նախկին մարդկանց ա-  
մեն մէկը օայն կենդանի, անիծ-  
ված հարցն էր, որ մարմնացել էր  
համայնքից դուրս չարտված մարդու  
վիճակում: Ինչպէս էր ստեղծվել  
այս թափառող, բորիկ Ռուսուն,

ինչով են նրանք ապրում իրանց  
խաւ ու մութ նկուղներում: Գորկի  
այստեղ շատ բան իմացաւ ու տեսաւ.  
Նրա սպագայ ստեղծագործութեան  
ամենահարուստ նիւթը, որով էնց  
ինքն էլ ապրել էր. կուտակվել էր  
նրա մօտ: Նա ճանաչեց կեանքի յա-  
տակն ու տակաւքը, բայց ոչ ինչ  
յետ նայեց այն կողմը, այլ թափան-  
ցեց նրա ծակուծուկերը, ապրեց  
նրա բոլոր յոյսերով, եւ այն տեղ,  
այն փոսի, այն ցեխի մէջ գտաւ իր  
«հերոսները»—որոնք ինչպէս պատա-  
ռոտած ցնցոտիներ իր մէջ, թէպէտ  
համայնքից դուրս չարտված, այսու-  
ամենայնիւ հարուստ ու բազմազան  
մտքերով, հարուստ ու բազմազան  
տրամադրութիւններով մարդիկ էին:  
1888ին Գորկին անձնասպանու-  
թեան փորձ արեց, նա գնդակահար  
արեց իր թոքը, բայց առողջացաւ.  
«հիւանդանարով», ինչքան հարկաւոր  
էր. յետոյ խնձոր ծախեց պահա-  
պանի պաշտօն կատարեց երկաթու-  
ղու վրա, իսկ 90 թ. էին կրկին Նիժ-  
նիում լոյս ընկաւ, որտեղ գնացել  
էր զինւորագրութեան գործով: Այս-  
տեղ նա սեռչին անգամ շփվեց ին-  
չէլիգէնցիայի հետ, Ապտովով  
զինւորութիւնից, նա սկսեց թափա-  
ռել. պատեց իր մը, ինչսարսիւն,  
կուրանը, շնկաւ թիֆլիս, որտեղ  
նա տեղ գտաւ երկաթուղու արհես-  
տանոցներում:  
Անա այստեղ 1892ին սկսեց նա իր  
գրական գործունէութիւնը, ապի  
տարով կապկազ լրագրում «Մակար  
Չուրբա» խորագրով պատմաւածք...  
Քաղաքից քաղաք թափառելու եւ  
փորձանքների հազիպելու տարիներ  
անցան, Գորկի, ոչ յանկարծ, այլ  
մի շարք նշանաւոր հանգամանքների  
փոփոխութիւններից յետոյ, դուրս  
եկաւ մի լայն ճանապարհ, որ մի  
յանի տարուց յետոյ հասցրեց նրան  
համաշխարհային փառքի եւ մարդ-  
կանց վրա հազարն ազդեցութիւն  
ունենալուն, Հիմա նա մի սիրելի  
գրող է թէ Ռուսաստանում, թէ ողջ  
Եւրոպայում ու Ամերիկայում, եւ

մինչեւ անգամ Եւրոպայում:  
Ինչ է ստեղծ նա մեկ, ինչ է քա-  
րողում, որովհետեւ, ինչպէս ամէն  
մի խոշոր գրող, միեւնոյն ժամանակ  
ուսուցիչ ու քարոզիչ է: Նա մեկ  
հետ խօսում է այն բանի մասին,  
թէ ինչպէս հարուստ, գիղեցիկ է  
մեկ յրջապատող կեանքը, թէ ինչ  
լաւ բան է մարդու մինչեւ անգամ  
իր անկման յատակում, մեծ քաղաք-  
ների կեղտոտ նկուղներում, խօսում  
է այն բանի մասին, թէ ինչպէս  
մեծ կեղտոտել ենք այս հարուստ  
ու սիրուն կեանքը մեր ստոր կըր-  
քելով, հայտնաբերել ենք շող,  
մեր սպանութեամբ ու նախառութեամբ,  
մեր սպանութեամբ, չը յարգելով  
մեր ու մեր մարդ-կայօր անձնաւո-  
րութիւնը:  
Թարգ էմմ. քան, լագարեանց  
«Մշակ»

Ա Ջ Դ

Հոգաբարձութիւնս կը հրաւի-  
րէ արգոյ հայ հասարակութիւնը  
ներկայ գտնուել տեղւոյս Ազգ-  
երկսեռ վարժարանաց տարեկան  
վիճակացոյցներու բաշխման հան-  
գէսին, որ տեղի պիտի ունենայ  
յաւաշիկայ կիրակի, 6 յուլիս,  
կէս օրէն վերջ ժամը 2ին ԱՄԱԷ-  
ս ինէնիյէ, որահին մէջ մասնակ-  
ցութեամբ «Իողթան» երգեցիկ  
խումբին:

Ի դիմաց Ազգ. երկսեռ վար-  
ժարանաց Հոգաբարձութեան

Առանադպիր Ատենապետ  
Գ. Աւագեան Յ. Մ. Թովմասեան  
2 Յուլիս 1903 (կնիք)  
Վառնա

ՍԵՄԻՆ ԱՈՋԵԻ  
Տ. ԲՕԼԵԱՆՕՅ

Ձեզի, ազնիւ ընկերու-  
հիներս, Ս. Պ. Կան, Պ. Պետ-ն եւ թ. Ս-եան  
Ա. Յ.

(Շար. նախորդ քիտեն)

Բայց ինչու ինչ կը դիմէ, Ու-  
րիշներ չկան, Ուրիշ ուղեք, կը  
կասկածի՞ արդեօք թէ իմ ու Սքա-  
սին սեղե... թէ ես... Բայց անկա-  
րելի է... Խնամիտ թիւն չէր ընել  
ուրիշ համար, եթէ ենթադրէր թէ  
... եթէ համարուած ըլլար թէ... Ան.  
կարելի է. աներեւակայելի... Ես  
ինքս անգամ կը վախում ինձի խոս-  
տովանի... Աստուած իմ եթէ գիտ-  
նար ան, եթէ կարենայի խնդիրը  
Սքասին պարզել, անկէ հրահանգներ  
ուզի իրը ճշմարիտ բարեկամ... Ան  
երեւակայելի, անկարելի է... Իսկ  
ան կողք որ անոր անջեւը թախան-  
ծիմ անգէկութեամբ ու բռնի: Բայց  
ինչ ըսել է ազգէկութեամբ ու բռնի:  
Երկախտեւ մտահոգութեանէ կտք.  
Բայց վերջապէս ինչու պիտի հը-  
բատարակէ, եթէ գայն խորասկէ-ու

զօվ-մօրեկբար, — տառապալի երկ-  
րիս վրայ մեզր ու եղ պիտի հօտի:  
Միթէ պիտի չորնան արցունքները  
Միթէ կեանքը աւելի տանելի, աւելի  
լաւ պիտի ըլլայ: Միթէ անկէ կո-  
ղպատուածները գեւ ու հանգիստ  
պիտի ապրին, Բայց անոնք բնաւ  
գիտցած չեն ուրախութիւն... Վրէժ-  
խնդիր ըլլալ կատարուած շարիթին  
դէմ: Չարիք չարիթին դէմ: Բայց  
ինչու: Ու ո՞վ կրնայ ըսել թէ վա-  
ղը ուրիշ չը չը պիտի յաջորդէ այս  
օրուան տապալուածին:  
«Բնաւ օղուտ չկայ... անոր՝ Սքա-  
սին համար ալ: Ինչ պիտի չհանի աւ-  
կէ, Երկու ծայրահեղութիւններ կան.  
աղէտարեր թղթերը հրատարակել,  
կամ ուսանելու երթալ: Մէկ կողմէն  
սին սղոտի, լրագրարան հայհոյանք  
ներ, որոնք գիմազրկուէն ետք պի-  
տի լուսին, միւս կողմէն՝ անոր ա-  
պագան. առաջինը ոչինչ է. իսկ երկ-  
րորդը՝ ամեն բան... Այս երկուքէն  
որը նախամեծար համարելու է,  
Բայց թէպէտե... կը վախում որ  
առաջինն ընտրէ... Ու անոր համար  
ես պիտի միջամտիմ... Ես պիտի կեց-  
նեմ գայն... Սակայն երկինք կը  
տեսնայ թէ ինչ մաքուր գիտում  
ուսանայ թէ ինչ մաքուր վերիտառ-  
ւածութեամբ պիտի չեղած վերիտառ-  
ւածութեամբ, որ չարագործի մը գլուխը  
կիյնայ... սեպեմք թէ չարագործ է...

«Եթէ չհաւանի» եթէ հակառակ ա-  
մեն բանի... Բայց թող: Գոնէ ես  
պիտի ցուցնեմ թէ գայն կեցնել կը-  
նամ թէ չէ... Անոր ապագային վրայ  
պիտի խօսիմ... Իսկ եթէ էս վերջը  
բան մը չօգնէ, պիտի խոստովանիմ  
անոր... ամեն բան... Ինչ որ ուզէ  
թող ըլլայ... Եթէ համաձայնի... Օ՛,  
եթէ համաձայնի, ըսի է թէ ան...  
Հոս հասնելով, Թիվթան ընկղմե-  
ցաւ իր զգացումներուն ու մտա-  
ձուլներուն, յոյսերուն ու վախերուն  
քառսին մէջ:  
Չայն մը, խիստ ու անոգոք ձայն  
մը—Թիվթան ճանչցաւ թէ սոսկալի  
ձայնն էր— հարցոց անոր.  
—«Այս սեմը անցնել կուզես,  
գիտե՞ս, ինչ կուպասէ ներսը քեզ,  
«Ցուրտ, քաղց, արհամարհանք,  
հեղուցութիւն, առեղծութիւն, նախա-  
տիք, բանտ, հիւանդութիւն, մահ  
անգամ...  
«Աստուծոյ թիւն, լքում...  
«Ոչ միայն ինչնամիներէդ, այլ  
ազգականներէդ ալ, բարեկամներէդ  
ալ:  
«Պատրաստ ես անյիշատակ զոհո-  
ղութիւններու ալ:  
«Ոճրագործութեան ալ:  
«Գիտե՞ս, ըրածիդ վրայ պիտի  
զղջաս, շատ ուշ պիտի հասկնաս  
թէ իսպառած ու մատող կեանքը

Ընդունայն զոհած ես...

Թիվթան, յանցաւորի պէս կը լը-  
ռէր, որովհետեւ չէր կրնար բերանը  
բանալ: Այնքան ամօթ ու սոսկում  
կզգար:

Ու գիշերային խաւարին մէջ, որ  
կը շրջապատէր գայն եւ կը միախառ-  
նուէր անոր հոգին պատող խաւա-  
րին, ան տեսաւ արցունքներու ու  
բուռ հեղեղ մը—միթէ անոր արցունք  
ները չէին, —իսկ հիղեղին ետեւը՝  
փայլուն, բայձր սեմ մը, որուն վը-  
րայէն անցան շատ մը անձանք ու  
ձանօթ դէմքեր: Վերջիններուն մէջն  
էին Սթոյչեվան ու Խոտիւնօֆ: Ան  
զարձաւ Թիվթային ու ձանր մետա-  
ղի ձայնով բուս:

—«Ներողութիւն, արգիւք եղայ  
ձեզ»

Թիվթան ձեռք երկարեց դէպի աւ-  
նոր, բայց վայրկեանակէս կորսն-  
ցոյց գայն—խաւար տիրեց:

Թեթեւ հովիկը փչեց: Ծիւղերը  
չարժեցան, ծառերը փսփսացին:

Ու Թիվթան կարծեց թէ պարտէզը  
յիցուեցաւ ստուերներու հագարաւոր  
հաւաչներով ու տերեւներու հագա-  
րաւոր համբոյններով:

Թուս գլուխեց  
Անդրեաս Յակոբեան  
16 Յունիս 1903  
Փ. Պօլիս  
Վերջ

